№ 72 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 17 1899 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 17 № 72

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Բոլոր տեղից գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Ամեն հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կառավարական հաղորդագրություն. Դատաստանական դաշտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Զատկական նուէրներ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Յուդայի վերջին գիշերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վերջացող դարի գործերից մէկն էլ այն է, որ մի ցեղին պատկանող զանազան ազգությունները առանձին ջանքեր են գործ դնում համախմբվելու, որպէս զի կարողանան առաջ տանել ընդհանուր ցեղական պայքար միւս ցեղերի դէմ: Առաջին անգամ ռազմական կազմակերպության այդ ձևը ցոյց տուեց սլաւոնական ցեղը և համասլաւոնականությունը, իբրև ռազմիկ դաշնակցություն մի և նոյն ծագում ունեցող ազգությունների, իբրև զինված եղբայրակցություն՝ շատ խոսեցնել տուեց սլաւոնների հետ ապրող ցեղերին, քաղաքական շատ վախեր պատճառեց Եւրոպային: Օրինակը վարակեց և միւս ցեղերին. ազգայնական չովինիզմը դարձաւ ցեղական. առաջ եկաւ համագերմանականությունը, որ այսօր իրողություն է և աղմկալից կռիւներ է վարում Աւստրիայում: Ամերիկո-սպանիական վերջին պատերազմի ժամանակ երևան եկաւ և բոմանական ցեղի միությանն հարցը, բայց այդ ցեղին պատկանող ազգությունները առանձին ցեղային չովինիստություն չը կարողացան զարթեցնել. մինչդեռ դրա հակառակ նոյն համագերմանականությունը ձգտում էր աւելի ևս ընդլայնել իր կազմակերպությունը, տալով նրան բոլոր անգլո-սաքսոնական ազգությունների դաշնակցությանն կերպարանք: Մենք անարդար կը լինէինք, եթէ այստեղ չը յիշատակէինք և մի այլ տեսակի համախմբման գաղափար. այդտեղ ազգություններ կապողը չը պիտի լինի մի ընդհանուր ծագումը, ցեղը, այլ կրօնը: Խօսքներս հավիսլամության մասին է, մի միություն, որ որպէս թէ պիտի կապէ, միացնէ տարփակաբիթ մոնգոլին, արիացի պարսիկին, սեմիտական արաբին, սնամորթ խափշիկին: Բայց այս միությունը հաւանական է, որ միայն մոլլաների և սոֆիաների երևակայության մէջ էլ մնայ, թէև յայտնի դէպքերում հրապարակ է հանվում քաղաքական վախեր ներշնչելու համար: Այսպէս թէ այնպէս, այսօր միմեանց դէմ կանգնած են երկու ցեղական միություններ—սլաւոնական և գերմանական և գոյություն ունեն ոչ իբրև թէօրիա, ոչ իբրև ապագայի գործ, այլ իբրև կազմակերպություններ, որոնք իրանց ետևում ունեն պատմություն, այժ են ներկայացնում: Համասլաւոնականությունը 1875—1878 թուականներին Բալկանեան թերակղզում տեղի ունեցած պատերազմների, շարժումների գլխաւոր դրդիչն էր և, ինչպէս գիտենք, ահագին գործ կատարեց, միլիոնաւոր մարդիկ ազատելով թիւրքական գարշելի լուծից: Այդ ազատությունը վերջնական նպատակ չէր, այլ միջոց ապագայ գործը հեշտացնելու համար. իսկ ապագայի գործն է ցեղական տիրապետությունը: Գերմանականությունը դուրս եկաւ այդ տիրապետական գաղափարի դէմ, բայց ոչ թէ նրան ջնջելու նպատակով, այլ որպէս զի խլէ տիրապետությունը, որպէս զի ինքը կլանէ սլաւոնական ցեղերը: Կռիւը, ի հարկէ, երկար կը տևէ: Եւ մեզ այժմեան բոպէին հետաքրքրողը այդ կռիւը չէ: Մենք միայն կը կամենայինք ցոյց տալ, թէ ինչպէս են ընթանում ցեղական շարժումները այն մարդիկ, որոնք աշխարհի վրա ամեն արդարություն կըշռում են ազգայնական և ցեղական չովինիզմի տեսակէտից: «Новое Время» լրագիրը այսպէս է բացատրում ցեղական միությունների միտքը.

Այն հին ճշմարտությունը, թէ մարդ լինելու համար պէտք է լինել իր հայրենիքի քաղաքացի, այժմ լրացվում է մի նոր պահանջով—պէտք է, բացի դրանից, լինել և իր ցեղի զաւակ: Ճշմարիտ և ազատ կատարելագործության համար հարկաւոր է ոտի տակ հայրենի հող ունենալ. և եթէ ճշմարիտ է, թէ սէրը դէպի հայրենիքը—մեր առաջին քայլն է դէպի ամբողջ մարդկությունը սիրելու գործը, նոյնքան ճշմարիտ է և այն, որ սէրը դէպի իր ցեղը՝ ոչ միայն հայրենիքի սահմաններում, այլ և այդ սահմաններից դուրս, երկրորդ քայլն է, որ մոտեցնում է մեզ բարոյական իդեալին. դա այն է, որ մերձաւորին մենք սովորում ենք սիրել, երբ սիրում ենք ամենամերձաւորին:

Եթէ այդպէս է, ինչու լրագիրը դէմ է այն բանին, որ համագերմանականությունը այնքան անողոք կռիւ է վարում սլաւոնականության դէմ Աւստրիայում: Ունենալով այդպիսի իդէալ, որ մարդուն նախ ճանաչում է իբրև այս կամ այն ցեղի, ազգության անդամ և ապա միայն իբրև մարդ, մենք պէտք է արդարացնենք ամեն մի վայրենի չովինիստական բռնկում, որ յանուն ցեղային առանձնակի բարեկեցության առաջ է գալիս այս կամ այն կողմում: Զէ՞ որ համագերմանականության ֆանատիկոս կողմնակիցն էլ, նոյն այդ իդէալի վրա հիմված՝ կասէ թէ անարդարություն է, որ աստրիական չէխերը բարեկեցիկ լինեն: Եթէ չէխը հաւատացած է, որ ինքը երջանիկ կը լինի միայն այն դէպքում, երբ գերմանացին ընկճված կը լինի իբրև հակառակ, օտար ցեղի ներկայացուցիչ, ինչու գերմանացին էլ նոյն կարծիքը չը պիտի ունենայ, նոյն հաւատը: Ո՛չ, արդարությունը, որ խաղաղություն կը տարածէր ցեղերի և լեզուների մէջ, այն է, որ բոլոր ազգերը, ցեղերը եղբայրներ են և պիտի միմեանց ձեռք տուած աշխատեն ընդհանուր բարօրության համար: Ասում են, որ նախ պէտք է սիրել իր ազգը, ապա իր ցեղը, որպէս զի յետոյ միայն կարելի լինի սիրել ամբողջ մարդկությունը: Բայց դա մի երկար, օձապտոյտ ճանապարհ է, որ հավաքեա երբէք վերջ չի ունենայ: Աւելի լաւ չի՞ լինի, եթէ ամենքը սկսեն ուղղակի հասկանալ, որ ազգերը եղբայրներ են, որ մարդկությունը մի ընդհանուր, միաբան ձգտում միայն պիտի ունենայ—առաջադիմություն ամենքի համար, մէկը ամենքի և ամենքը մէկի համար: Եթէ գերմանական, սլաւոնական, բոմանական, անգլո-սաքսոնական հավախմբումների տեղ երևան եկած լինէր համամարդկային եղբայրակցության ծառայող մի ուժեղ կազմակերպություն, մենք հաւատացած ենք, որ աշխարհը այժմ շատ և շատ առաջ գնացած կը լինէր, ընդհանուր հաշտության, հավասարության շատ հիմնական կէտեր որոշած կը լինէր: Բայց դժբաղդությունն այն է, որ մինչդեռ համաշխարհային եղբայրակցության գաղափարը անհատների բաղձանքն է, ցեղային վէճերի, տեղական մասնաւոր շահերի և ձգտումների պաշտամունքը առաջացրել է այնպիսի ուժեղ ռազմիկ կազմակերպություններ, ինչպէս են չովինիստական հավախմբումները: Դրանց վէճերը դարեր կարող են տևել, և որքան չարիքների, որքան մրցությունների ասպարէզ պիտի բանան, որքան աշխարհաշէն, օգտակար ոյժեր պիտի սպառեն:

*

Վանի թշուառությունները դարմանելու համար, ինչպէս գիտենք, Կ. Պոլսի ջջերը առաջնորդական տեղապահ թէ այցելու հովիւ նշանակեցին Ներսէս եպիսկոպոս Ասլանեանին: Վաղուցվայ բան է, մենք չենք էլ յիշում թէ երբ ծագեց այդ միտքը, երբ իրականացաւ, երբ ամենայն հայոց կաթողիկոսը, Օրմանեան պատրիարքը և կրօնական ժողովը կարողացան կատարել նորապսակ սրբազանի յամառությունը և նա, վերջապէս յանձն առաւ գնալ Վան: Յանձն առնելը, ի հարկէ, դեռ ճանապարհ ընկնել չէ նշանակում: Եւ իրաւ, սկսած այն պատմական օրից, երբ Կ. Պոլսի եպիսկոպոսներից մէկը մի չը տեսնված անձնազոհություն ցոյց տուեց, համաձայնվելով գնալ Վանի պէս մի տկար ու հիւանդոտ գաւառ, Կ. Պոլսի լրագիրները սրբատարոի հետևում էին սրբազանի բոլոր շարժումներին. մի քանի շաբաթ նա բանակցություն է սկսում պատրիարքարանի հետ «ինչ-ինչ հարցերի» համար, մի շաբաթ հիւանդ է, յետոյ անցագիր պէտք է ձեռք բերել, յետոյ աւետվում է թէ անցագիրը ստացվել է Բ. Դռնից, յետոյ անակնկալներ, զանազան լուրեր եպիսկոպոսի ճանապարհվելու օրի մասին: Բանը այնտեղին հասաւ, որ ճանապարհվելու հանելուկը նոյն իսկ «Արևելքի» առաջնորդողի մէջ մտաւ: Ի՞նչ է վերջը, կը հարցնի ընթերցողը: Մենք էլ չը գիտենք: Այսօրվայ պօստով ստացած թիւրքահայ լրագիրները այսպէս են ներկայացնում այդ անագին հարցը: «Բիւրակն» գրում է.

Վանի առաջնորդ Ներսէս սրբազան իր անցագիրը հանել տուած է պատրիարքարանի ձեռքով և լրջօրէն կը պատրաստուի մեկնիլ իր պաշտօնատեղին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

(Էմիլ Գեբհարտի „Պատմական Առասպելներից“)

—

Յուդան՝ մղված ամբոխից՝ հետևում էր հռոմայեցի զինուորներին: Բայց շատերը հէնց այն մարդկանցից, որոնք նոյն ժամին պահանջում էին Բարաբբայի արձակումը, լսելով հարիւրապետի խօսքերը, սկսեցին դցել Յուդայի վրա արհամարհական հայեացքներ: Սա՝ վախից չափաւորեց քայլերը և իրան դցեց առաջին պատահած խուլ փողոցը:

—Մթթէ ամենքի համար ժամտախտ եմ դարձել,—հարցնում էր ինքն իրան:

Այդ ժամանակ վճռեց տուն վերադառնալ և հանդարտորէն կշռել իր իսկական վիճակը և սպասող ապագան. բայց պատահմամբ հանդիպեց կանանց ու պատանիների մի մեծ ժողովի, որոնց տեսնելուն պէս, ակամայ սարսռաց: Դրանք այն պատանիներն էին, որոնք երեք օր առաջ ծաղիկներ ու ծառերի ճիւղեր էին տարածում Յիսուսի Երուսաղէմ մտնելու ճանապարհի վրա՝ հանդիսաւորապէս երգելով. «Ովսաննա, օրհնեալ որ գաս յանուն Տեառն»:

Նա շուռ եկաւ և ուղղեց քայլերը դէպի քաղաքի պարիսպները: Բայց պատանիները հետամտեցին նրան, բարձրաձայն նզովելով անունը: Նա արագացրեց քայլերը և փախաւ այն հրապարակը, ուր Գալիլիայից եկած զիւղացիները և հովիւները վաճառ էին հանել իրանց բերքերը:

—Յուդա, Յուդա—աղաղակում էին պատանիները:

—Յուդա—կրկնում էին զիւղացիները.—մահ նրան...

Քղամիդը հաւաքած՝ փախչում էր ու փախչում իր վրա տեղացող քարերից, յարձակվող շներից, վախենալով, որ չը կորցնի 30 արծաթը և կեանքն իսկ: Յանկարծ նրա առաջ քաղաքի դռներից մէկը լայն բացված երևաց: Կատաղի ուժգնությամբ իրան զցեց դռան կամարների տակ: Ամբոխը հետևում էր նրան. բայց հռոմայեցի դռնապահ զինուորները, կարծելով թէ ժողովուրդը ապստամբվել՝ դիմում է դէպի Գողգոթա հրէից թագաւորին ազատելու, խաչեցին նիզակները և կտրեցին հետամտողների ճանապարհը:

Արևի ճառագայթների տակ լուսաւորված քաղաքի շրջակայքում ինքն իրան գտնելով, Յուդան շարունակում էր փախչել, ուր աչքերը կտրում էին: Փախչում էր—չիմանալով՝ թէ ուր: Երբեմն բռնում էր լեռան ճանապարհը, երբեմն դէպի ծովն էր թեքվում: Նրա համար մի և նոյնն էր, ուր էլ երթար. դէպի Տիբերիական ծովը թէ Սամարիա, դէպի Բէթղեհէմ, թէ Սոդոմ: Մի միտք, մի սոսկալի, օրհասական միտք տիրել էր նրան՝ կտրած է ինքը.—նրան, Կեսարի ու Մովսիսի անձնատուր ծառային հալածում էին, ինչպէս մի կատաղած շան: Նա չը գիտէր թէ գիշերը որտեղ պիտի պատսպարան գտնէր և թէ ինչ պիտի լինէր իր ապագայ վիճակը:

Կէսօրի մօտերքում նա նստեց մի բարձր ժայռի ստուերում և զարմանքով նկատեց, որ ինչքան երկար միջոց էլ վազ էր տուել, բայց և այնպէս Երուսաղէմի մօտերքից հեռու չէր անցել: Ուղղակի նրա առաջ, քաղաքից մի քիչ հեռու, բլուրի կատարին երևում էին հռոմայեցի զինուորներ, իսկ նրանց ետևից տղամարդկանց, կանանց ու երեխաների բազմություն: Օտարոտի, օրհասական մի տեսարան հանդիսացաւ նրա առաջ: Զինուորների ու բազմության գլուխներից բարձր երևում էր երեք խաչափայտ՝ վրաները երեք խաչվածներով: Յուդան ճանաչեց կառափնատեղին և մէջտեղի խաչի վրա՝ փշեայ պսակով՝ Յիսուսին: Իսկ երբ հռոմայեցի զինուորները քաշվեցին դէպի Երուսաղէմ, հրէից թագաւորի ոտքերի տակ մնաց միայն մի ողբացող կին, մի քիչ հեռում՝ երևում էին խաչեցեալի աշակերտներ, և երեսների վրա գետին խոնարհված մանուկներ:

Այս տեսարանը, կարծես, արիություն տուեց Յուդային և մխիթարություն այն վշտի մէջ, Պիղատոսն իր տեղ վրէժ էր լուծել: Բացի դրանից մարդարէները տարել, համբերել էին ժողովրդից աւելի անարդանքներ, զնատցիներից աւելի արհամարհանքներ և այս աշխարհի մեծամասներից աւելի ծանր վարժունքներ: Նրանցից քանիներն իրանց կեանքն են վճարել Աստուծուն ծառայելու համար: Եթէ իրան վիճակվեց թողնելու Հրէաստանը լուտանքների տարափների տակ, գոնէ ողջ էր ինքը և քսակն էլ լիքը փողով: Եսայի մարգարէի պէս հօ փայտի սղոցով իրան մասմաս չեն սղոցել: Եւ մէջքը դարձնելով դէպի ապաշնորհ ծերակոյտը, սկսեց արդէն հանգիստ կերպով բռնել Նաֆթալի ճանապարհը: Բայց յանկարծ մի զարհուրելի մրրիկ բարձրացաւ. արեգակը խաւարեց և սև մառայը տիրեց Երուսաղէմին. կայծակի հարուածով՝ Յուդայից մի քանի քայլ հեռու ժայռը ճեղքվեց. իսկ այնտեղ՝ հեռում՝ նոյն կայծակի փայլի տակ՝ լուսաւորվեցին երեք խաչ—վրաները կախված երեք խաչեցեալներով, որոնք, կարծես, նայում էին մատնիչի երեսին:

Սոսկումով պատած Յուդան գետին ընկաւ և քղամիդը գլխին քաշեց:

—

Երեկոյեան միայն վերկացաւ: Գերեզմանական խաղաղություն էր թագաւորում ամենուրեք: Նա՝ չը համարձակվեց հայեացքը դարձնել դէպի կառափնատեղին, և՝ թագաւորող լռությունը վախեցնում էր նրան. նա ցանկանում էր որ և իցէ մէկին պատահել, մարդկային մի ձայն լսել և մարդկային մի դէմքի վրա կարեկցության հետք տեսնել: Մօտեցող մառայ գիշերը սոսկում էր պատճառում նրան: Յետ դարձաւ դէպի Երուսաղէմ և յոգնածությունից ուժասպառ՝ նստեց ճանապարհի ծայրին:

Շուտով երկնքի վրա վառվեցին աստղերը, և լուսինը վշտագին լուսաւորեց մէգով ծածկված երկիրը: Յանկարծ՝ քաղաքի ուղղությամբ քայլեր լսվեցին, և երևաց արագ քայլերով ընթացող կուռը դուրս ընկած մի մարդու ստուեր: Սա անցկացաւ Յուդայի մօտով:

—Ահասվէր *) ձայն տուեց տասներկուսից մէկը—Ահասվէր:

Անցորդը ոչ պատասխանեց և ոչ կանգնեց:

Յուդան վազեց ետևից և ողորմագին աղաչեց նրան.

—Ահասվէր, թող որ ես ևս գամ քո ետևից. կը գամ՝ ուր կերթաս. կը մնամ, ուր դու կը մնաս: Ես կը լինեմ քո ստրուկը. բայց մի թողնի միայնակ ինձ այս գիշեր:

—Ես գնում եմ հեռու—վերջապէս պատասխանեց անցորդը, Ասորիք, Եգիպտոս, Ասիայի խորքը, աշխարհիս ծայրը, Հռոմ: Ես երբէք չը պիտի ոչ կանգ առնեմ, ոչ քնեմ: Ես Յիսուսին կարեկցություն ցոյց չը տուի և պիտի քամեմ սրտիս կարծրությունը յաւիտեան թափառելով: Սակայն այն Արդարի արիւնը իմ ճակատին չէ, և՝ յիշիր, Յուդա, որ ես պիտի տրորեմ ոտքե-

*) Ահասվէր՝ ըստ աւանդութեան՝ այն անանուն աշակերտն էր, որի մասին Քրիստոս ասաց. „Եթէ կամիմ զի կացցէ դա՝ մինչև ես գամ“ (Յովհ. խա 22), որի հիման վրա և կազմվել է Թափառական Հրէայի առասպելը:

Իսկ «Արևելքը» աւելի լաւատեղեակ է երևում.

Վանայ այցելու հովիւ Ներսէս եպիսկոպոս Ասլանեան գրած է պատրիարք հօր թէ կը պատրաստուի յառաջիկայ երկուշաբթի օր ճամբայ ելլել իր պաշտօնատեղին ուղևորելու համար։

Ինչպէս։ Բայց այլ ևս աւելորդ չէ, որ Վանը արժանանայ իր մեծահռչակ առաջնորդին։ Սովը իր բանն արել է, պրծել, կրօնափոխութիւնը նոյնպէս կանգ է առել։ Էլ ինչ կայ։ Մենք, որ հետևել ենք Կ. Պոլսի թերթերին, կարող ենք ասել, որ հազիւ թէ Վիլհելմ կայսրի ճանապարհորդութեան մասին աւելի շատ գրված լինի, քանի Ասլանեան եպիսկոպոսի ճանապարհ ընկնելու օրվայ մասին։ Այս դեռ ճանապարհվելու օրն է, ապա ինչ կը լինի ինքն ճանապարհորդութիւնը։ Դողացէք, Վանի դժնիկեաններ, զուր չէ այսքան նաղ ու շուքը... Հայ եպիսկոպոսը իր դաւառական թեմի համար Վիլհելմից էլ բարձր է, բայց թիւրք փաշայի մօտ «տոքի հոդ»։ Այսպէս է գրված։

ԿԱՌԱՎԱՐԶԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Խարկով։ Պետերբուրգի ուսանողների առաջարկութիւնն ստանալով՝ գործադուլ անել մինչև գոյութիւն ունեցող հասարակական կանոնադրութեան փոփոխութիւնը, հասարակաց, տէխնօլոգիական և անասաբուժական ինստիտուտների ուսանողները փետրվարի 15-ից ժողովներ կայացրին, ուր վճռվեց չը յաճախել դասախօսութիւնները և արգելել նրանց ընթերցումը մինչև որ Պետերբուրգի ընկերների արած պահանջներին բաւարարութիւն չը տրվի։

Տեխնօլոգիական ինստիտուտում փետրվարի 18-ին և 20-ին տեղի ունեցած ժողովներում մշակվեցին ապա և իրանց պահանջները, որոնք յանձնվեցին հասարակաց և անասնաբուժական ինստիտուտի ուսանողների քննութեանը և այդ առիթով վերոյիշեալ դպրոցների մէջ կայացած ժողովներում ընդունվեցին միաձայն։ Փետրվարի 20-ին քաղաքում ցրվեցին հեկտոգրաֆիական շրջաբերականներ՝ տեղի ունեցող յուզմունքների առիթով՝ պախարակելով կառավարութեան գործողութիւնները։

Փետրվարի 24-ին հասարակաց պատերում, բէկտորի ստորագրութեամբ, կախվեց հետևեալ յայտարարութիւնը. «Ի նկատի ունենալով այն, որ Խարկովի կայսերական համալսարանի ուսանողները, բաւական ժամանակամիջոց յամառութեամբ հրաժարվում էին դասախօսութիւնները յաճախելուց և ուսումնական այլ զբաղմունքներից, նրանք, ուսումնարանական բարձր իշխանութեան կարգադրութեան համաձայն, արձակված են համարվում համալսարանից»։ Ապա յայտարարութեան մէջ ասված էր թէ ուսանողները ինչ կարգով կարող են արձակման վկայականներ ստանալ և խնդիրներ տալ հասարակաց նորից մտնելու համար։

Ապա դասախօսութիւնները վերսկսելուց յետոյ, մարտի 12-ից, տարածվեցին հրաւէրներ «անհաշտների խմբի» ստորագրութեամբ՝ դադարած յուզմունքը վերսկսելու նպատակով, բայց համակրութիւն չը գտան, և պարապմունքները շարունակվեցին մինչև մարտի 30-ը։

Կազան։ Փետրվարի 23-ին, Կազանի հասարակաց ուսանողների մէջ երևաց մի կոչ, որը հրաւիրում էր նրանց միանալ Պետերբուրգի հասարակաց ուսանողների բողոքին։ Այդ առիթով ասի 24-ին ուսանողները հաւաքվեցին համալսարանում նշանաւոր թիով և վճռեցին դադարեցնել դասախօսութիւններ յաճախելը մարտի 1-ից։ Իսկ փետրվարի 25-ին, 12 լիազօրների միջոցով, բէկտորին տուեցին մի խնդրագիր յայտնելով, թէ իրանք, իրանց կողմից, չեն ցանկանում անկարգութիւններ անել, բայց Պետերբուրգի ուսանողներին հասակրութիւն ցոյց տալու պատճառով, համաձայնվեցին դադարեցնել դասախօսութիւններ յաճախելը մինչև կը վճռվի այդ հասարակաց մէջ տեղի ունեցած անկարգութիւնների գործը և մինչև կը վերսկսվեն այնտեղ զբաղմունքները։ Ապա միջնորդելով, որ այժմեան համալսարանական կանոնադրութիւնը վերանայվի կամ, գոնէ, փոխվեն նրա մի քանի պարագրաֆները, խնդրագրի մէջ պահանջ էր յայտնվում Պետերբուրգում կալանաւորված բոլոր ուսանողներին ազատել և վերադարձնել աքսորվածներին։

Մարտի 1-ին պարապմունքները վերսկսելուց, բարեկենդանից յետոյ, առաջին օրերը դասախօսութիւններին ներկայ էր ուսանողների շատ աննշան թիւ, բայց Պետերբուրգում պարապմունքներ վերսկսելու մասին տեղեկութիւններ ստանալուց յետոյ, ասի 4-ից նրանք սկսեցին յաճախել դասախօսութիւնները բոլոր ֆակուլտէտներում սովորական կարգով։

—

Չը նայելով այն բանին, որ անկարգութիւններին մասնակցում էր ունկնդիրների հասարակաց փոքր մասը, բարձրագոյն դպրոցների մեծ մասից անհրաժեշտ եղաւ արձակել ուսանողների բաւական նշանաւոր թիւ, որոնց յամառութիւնը անկարգութիւններ շարունակելու համար հնարաւորութիւն չէր տալիս թողնել այլ ևս այդպիսի ունկնդիրներին ուսանող երիտասարդութեան շրջանում։ Այդ միջոցը ձեռք կառնվի սրանից յետոյ ևս, որովհետև, ուսանողների պահանջով դպրոցներում գործադրվող կանոնադրութիւններից և կանոններից չեղվելը և ուսումնարանական պարապմունքների կարգը և քննութիւնների ժամանակ փոխելը չի թոյլ տրվի։ Արձակվածներից շատերին, որոնք իրանց պատանեկական անդիտութեան և անփորձութեան պատճառով ընկել են այդ մոլորութիւնների մէջ և որոնք արդէն կը սթափվեն այդ մոլորութիւններից, ձեռք առնված այդ միջոցը չի զրկի նրանց հնարաւորութիւնից կրկին ընդունվել դպրոցներում և աւարտել իրանց ուսումը, բայց, յամենայն դէպս, այդ զիջողութիւնը կարող է հետևանք լինել իրանց սխալների և մոլորութիւնների խոստովանութեան, և ոչ թէ հետևանք հաւաքական բռնի գործողութիւնների այն սխալ հաշուով, թէ դպրոցներից արձակվածների նշանաւոր թիւը դժուար դրութեան մէջ կը դնի այդ դպրոցները։

Ինչ վերաբերում է նրանց, որոնք, օգուտ քաղելով դէպքից, ուղղում են իրանց ջանքերը դէպի այն, որպէս զի ուսանող երիտասարդութիւնը դնեն այնպիսի յանցաւոր գործողութիւնների ճանապարհի վրա, որոնք դիմում են հակակառավարչական և դպրոցի հետ ոչինչ կապ չունեցող նպատակներին, այդ անձանց վերաբերմամբ անշեղ կը գործադրվեն օրէնքով որոշած պատիժները։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Պերճ Զիլինգարեանի սպանութեան գործը)

—

Քիւրդեանի մատնացոյց արած անձինքը, որոնց անունները նա ճիշդ չը կարողացաւ տալ, նրա նկարագրութեան հիման վրա, էին՝ 1-ինը հէնց այն Սահակ Բագանեանը, որը փորձում էր Պերճ Զիլինգարեանի սպանութիւնը վերագրել շրջակայ թիւրք ազգաբնակութեանը, 2-ը այն չիլ թիւրք Ըէջաբ Օսման-օղլի Օկուս-օղլին, որը, ինչպէս վերև յիշված էր, թիւրքաց ամբողջ ազգաբնակութիւնից միակն էր, որ հրաժարվում էր որոնել կորած տղային և 3-ը թիւրք Իբրահիմ Օսման-օղլի Բագրատ-օղլին։ Վերջինին գրտնելու օգնեց իր լրացուցիչ ցուցմունքով Սեպուհ Քիւրդեանը, յայտնելով, որ նա այն թիւրքն էր, որը օգոստոսի 24-ի առաւօտեան եկաւ Ըէջանովի կողմից միլիցիօնէրի հետ միասին։ Քիւրդեանի այդպիսի ցուցմունքի հիման վրա, որ համապատասխանում է նախնական քննութեան փաստերին, նրա բոլոր մատնացոյց արած անձինքը դատի ենթարկվեցին՝ որպէս մեղադրվողներ Պերճ Զիլինգարեանի սպանութեան մէջ։ Սակայն նրանք իրանց մեղաւոր չը ճանաչեցին, բայց նրանցից ոչ մէկին չաջողվեց մի փոքր համոզեցուցիչ կերպով ապացուցանելու Քիւրդեանի, նրանց խօսքերով, սուտ մատնութիւնը։ Ընդհակառակը, Քիւրդեանի նոր ցուցմունքը, որ նա զանազան ժամանակ արել էր կալանաւոր Կիպիչեանին և հանդուցեալի հօրը՝ Արշամ Զիլինգարեանին, բաւական նման էր սկզբնական քննութեան փաստերին։ Օրինակ, Քիւրդեանի բերած շարժառիթը՝ Պերճ Զիլինգարեանին սպանելու համար, համաձայն Տրապիզոնի ռուսաց հիւպատոս Շէչէլկունովի ցուցմունքին և Արշամ Զիլինգարեանի լրացուցիչ ցուցմունքներին, կատարելապէս հաւանական երևաց։ Հիւպատոս Շէչէլկունովի վկայութեամբ, թիւրքերը սկսեցին հայերի կոտորածը այն պատճառով, որ երկու հայեր փորձ փորձեցին թիւրք բարձրաստիճան մի անձի կեանքի դէմ։ Այդ ժամանակ Տրապիզոնում իր ընտանիքով ապրող Արշամ Զիլինգարեան բացարձակ պախարակում էր իր ցեղակիցների վարմունքը և դուրս արաւ իր տնից նրանցից մի քանիսին, որոնք դիմեցին նրան՝ խնդրելով զնք տալ իրանց։ Երբ թիւրքաց ազգարնակութիւնը, պատրաստվելով վրէժ լուծել հայերից, սկսեց կարմիր խաչերով նշան դնել այն տների վրա, որոնց բնակիչները պէտք է ենթարկվէին կոտորածի, Զիլինգարեանի տան վրա նշան չէր դրված։ 1893 թուի սեպտեմբերի 22-ին, առաջին անկարգութիւնների ժամանակ Տրապիզոնում, վկայ Շէչէլկունովի խօսքով, թիւրքերից հալածվող մի խումբ փրկութիւն էր որոնում Զիլինգարեանի տանը, բայց այդ տան դռները փակված էին նրա առաջ։ Հէնց կոտորածի օրը, սեպտեմբերի 23-ին, Արշամ Զիլինգարեան շատ ուրիշ հայերի հետ ապաստան գտաւ ռուսաց հիւպատոսարանի մէջ. այդտեղ յանձնարարվեց նրան հիւպատոսարանի մէջ ապատված բոլոր հայերի անուանական ցուցակը կազմել։ Այդպիսի յանձնարարութիւնը, որ կատարեց Զիլինգարեան, մեծ դժգոհութիւն յարուցեց ներկայ եղող հայերի մէջ, և Զիլինգարեանի վարմունքը բացատրում էին նրանով, թէ նա դիտաւորութիւն ունի հաղորդել իրանց անունները թիւրքերին. մօտ 25 հոգի հրաժարվեցին իրանց անուններն ասել և հեռացան հիւպատոսարանից, այնպէս որ նրանցից երկուսից Զիլինգարեան անդգուշութիւն ունէր զէնքը խլել, իսկ մէկի, Շէչէլկունովի ցուցմունքով, մինչև անգամ ականջները քաշեց։ Այդ բոլորը, միասին առած, ի հարկէ, պէտք է անախորժ յարաբերութիւններ ստեղծէր դէպի Զիլինգարեան անկարգութիւնների ժամանակ վնասված հայերի և նրանց ազգականների կողմից և հեշտ կարող էր, թէկուզ անարդար, թիւրքաց լրտեսի անուն վաստակել տալ նրան, ինչպէս ասեց Սեպուհ Քիւրդեան։ Ինքն Քիւրդեան և նրա ցոյց տուած Յովհաննէս Մեղաւորեան, այնպիսի անձինք էին, որոնք Տրապիզոնի անցքերից վնասվածների թւում մօտիկ ազգականներ ունէին։ Տրապիզոնի ռուսաց հիւպատոսի պաշտօնական հաղորդագրութեան և սկզբնական քննութեան ժամանակ նրա անձնական վկայութեան համաձայն, 1895 թուի սեպտեմբերի 26-ին Տրապիզոնում սպանվեց Քիւրդեանի քրոջ մարդը, որի ամարանոցում վերջինս ապրում էր Պերճ Զիլինգարեանի սպանութիւնից առաջ, իսկ Յովհաննէս Մեղաւորեանի հօրեղբօր որդին հազիւ կարողացաւ կոտրած ոտով ազատվել ռուսաց հիւպատոսարանում, կորցնելով մի և նոյն ժամանակ իր անչափահաս զաւակին, որը սպանվեց դէպի հիւպատոսարանը տանող ճանապարհին։

—

Թիւրքերեն տակ ամեն դարշելու, որ կը պատահի ճանապարհիս։

Թշուառն անհետացաւ մառլի մէջ, և երկար ժամանակ Ցուդան ականջ էր դնում հեռացող քայլերին։ Ցետոյ ոտքերը շարունակեց կամացկամաց փոխել դէպի Երուսաղէմ։ Գիտէր, որ քաղաքի պարիսպներից ոչ հեռու, ձորի խորքերում թաղված կային քանի մի խրճիթներ, ուր ապաստան էին գտնում եղեռնագործներն ու քաղաքի սինլքորները։ Թերևս այնտեղ՝ մինչև արևածագը՝ դադար դնի։

—

Կիսաբաց դրան արանքից լոյս էր երևում։ Ցուդան նայեց և տեսաւ ներսում աւազակ Բարաբբային, որ սարսափ էր տարածել ամբողջ Հրէաստանի վրա և որին ներել էր Պիղատոսը, ամբոխի ցանկութեան համեմատ։ Նա բաղխեց։ Դուռը բացվեց։

—Բարաբբա,—ասեց նա—ես յոգնած եմ մրսում եմ... ես քաղցած եմ... սոսկում եմ... թոյլ տուր այս գիշեր անցկացնեմ կացարանիդ քարէ յատակի վրա... քեզ մօտ...

Աւազակը կանգնած էր շէմքում և ուսերը վեր քաշելով, ասեց վայրենի մի քրքիջ արձակելով.

—Դու ուզում ես անպատուել Բարաբբային։ Եթէ այսօր քեզ ընդունեմ, վաղն ինձ Երուսաղէմում կը քարկոծեն։ Ո՛չ. այդ անկարելի է։ Իմացիր, Ցուդա, ես վեցից աւելի հրէայ և երկու հռօմայեցի զինուոր եմ սպանած, ես բռներով շատ ոսկի եմ գողացել տաճարի մէջ քահանայապետի արկղից, ես սուրբ տապանակի ոսկեայ լծակներն եմ դուրս քաշել, որին ոչ ոք չէ կարող մօտենալ, բայց ես երբէք մարդու հոգի չեմ վնասել, ես երբէք դահիճներին անմեղ զոհեր չեմ տուել։ Ես աւելի շուտով քեզ իմ ձեռքերով կը խեղդեմ, քան թէ կը թողնեմ քեզ ինձ մօտ։ Եթէ դու քնել ես ուզում, Գողգոթան հեռու չէ այստեղից. դու կարող ես այնտեղ գլուխդ վարդապետիդ խաչին տուած՝ քնել հանգիստ կերպով—մինչև անգամ դևը ինքը չի խանգարի հանգիստդ այնտեղ։

Եւ Ցուդան քաղաքի պարիսպների տակ, ձիթենի ծառերի ու խաղողի վազերի մէջ ոլորմոլոր քարշ էր գալիս։ Բարաբբայի յանդգնութիւնը մինչև հոգու խորքը հարուածեց։ Մինչև այդ վայրկեան Յիսուսին մատնելու համար Աստուած վեհանձնօրէն, արդարապէս էր վրէժ լուծում. իրանից երես դարձրին տաճարը, Հռօմը, աշակերտները, ժողովուրդը, անիծեալ հրէան. այս ամենը ոչինչ. բայց որ մարդասպանը անարգ կերպով դուրս վռնդեց իր մօտից—այդ արդէն չափազանց մեծ, չափազանց ստորացուցիչ էր։

Նրա ատելութիւնը դէպի Նազովրեցին հրէշի նման աճում էր։ Նա էր իր ամբողջ խայտառակութեան պատճառը։ Բերկրանք էր զգում, որ մատնել էր Յիսուսին և տաժանելի կերպով մղտում էր մտածելով, թէ որչափ տանջանք պիտի քաշած լինէր Յիսուս։ Նա իմաստուն էր, թէ մարակների հարուածներից որքան վէրքեր պիտի ստացած լինէր, քանի ապտակ, քանի փուչ պիտի լինէր նրա պսակի մէջ, քանի մեխով դամված պիտի լինէր խաչից։

Անսպասելի կերպով նրա գլխում ծագեց այն միտքը, որ շատ էժան գնով է եղել ծերակոյտի վրա ծախած այնքան թանգագին զոհը։

—Նա արժէր ամենապակասը հարիւր արծաթ—չչնջաց Ցուդան—քահանայապետը խաբեց ինձ։

Նա բռունցքներով աստղաշար երկնքին սպառնալիք կարդաց և ծարաւից տանջված՝ դիմեց դէպի ծառերի կոյտը, որոնց մէջ թերևս աղբիւր լինէր ծածկված։ Թոյլ քամին հանդարտ շարժում էր սաղարթը։ Ցուդային թվաց, թէ հոգին աւելի խաղաղվել էր. բայց յանկարծ՝ ինչպէս դէպի անհուն յատակը սուզվող մի խեղդվող՝ ճիչ արձակեց. նա չոքեց ու ծածկեց երեսը ձեռքերով։ Իր առաջ կանգնած էր հէնց այն իսկ ձիթենին, որի տակ նախընթաց օրը հաղորդելով մատնեց իր Վարդապետին։

Փորսող անելով դուրս եկաւ Գեթսեմանի պարտէզից և երկար ժամանակ թափառեց գիշերային լռութեան մէջ։ Ոչ մի բանի վրա չէր մտածում, ոչ մի բանի վրա յոյս չունէր և՝ եթէ մի բան ցանկանում էր, այդ այն էր, որ տեսնվէր սատանայի հետ, որ իր մեծ վիշտը բանար նրա առաջ։

Վերջապէս հասաւ երկու արժանաւոր, որոնք իրանց չորացած վարտ ճիւղերով ծածկում էին Ցակոբի ջրհորը, որտեղ մի ժամանակ նստել էր Յիսուսը։ Ցուդան ընկաւ գետնի վրա և՝ որովհետև չէր երևում ոչ շղթան, ոչ դոյլը, ուստի և կրակ կտրած երեսն ի վեր մեկնվեց ջրհորի կողքին։

—

Արմատենիների միջից անակնկալ կերպով երևաց ոտից գլուխ սպիտակ հագած մի ջահիլ աղջիկ։ Հօլանի կոներով բռնած էր ուսի վրա մի սափոր։ Ցուդան նայեց վրան և դողդողուն ձայնով արտասանեց.

—Ծարաւ եմ։

Ջահէլ աղջիկը, ինչպէս մի արիւնարբու գազան տեսած՝ զարհուրեց։

—Ծարաւ եմ—կրկնեց Ցուդան։

—Եւ Նա նոյնպէս—պատասխանեց ջահիլ աղջիկը—Մարգարէն, որին դու մատնեցիր, բացականչեց խաչի վրա. «Ծարաւ եմ»։ Իսկ հռօմայեցիները նիզակի ծայրով մատուցին Նրան սպունգ լեղիով։

Այս խօսքերի հետ միաժամանակ քարշ արեց թոկով սափորը ջրհորի մէջ և դուրս հանեց պարզ ու ոսան ջուրը։

Ցուդան լուռ էր։ Դողում էր ամբողջ մարմնով այս անմեղ մանկան առաջ, և ակամայ մեկնեց իր ցամաքած շրթունքները դէպի կենդանացուցիչ հեղուկը։

Աղջիկը մատուցեց սափորը և ասաց.

—Ա՛ռ, խմիր յանուն Յիսուսի։

Իսկ երբ ծարաւը յագեցրեց, աղջիկը անխօս առաւ սափորը, դրեց ուսի վրա և լուսնի արծաթեայ շողերի տակ հանդարտ հեռացաւ։

Այդ ժամանակ Ցուդայի մառլ հոգու մէջ մի անսպասելի լոյս ծագեց։ Արագ հայեացք ձգելով չափեց իր խայտառակութեան արհաւիրքը և իր անկման անյատակ խորութիւնը։ Զահիլ աղջկայ քնքոյշ բարութիւնը բաց արեց նրա աչքերը և խոստովանվեց իր մատնութեան զարհուրանքը։

—Բայց ո՞վ էր այն խաչի վրա գամվածը—մտածում էր նա, որ Նրա անունով ջահիլ աղջիկը ցոյց տուեց ողորմածութիւն դէպի չարագործս, որից երես էին դարձնում ամենքը։

Երկար ժամանակ նստեց Ցակոբի ջրհորի մօտ, և շարունակ միևնոյն միտքը տանջում էր նրա հոգին, ոչ թէ մխիթարանք ազդելով, այլ ընդհակառակն՝ անհանդուրժելի տանջանքներ պատճառելով։ Նրա առաջ բարձրաւանդակի վրա երևում էր չորացած թզենին. և՝ նա մառլ կերպով միտը բերեց Վարդապետի առակը։ Թափ տուեց ձեռքը, վազեց դէպի ծառը, գետին գցեց իր քղամիդը, շաղ տուեց նրա վրա երեսուն արծաթը, բաց արեց գոտին և կախվեց անպտուղ թզենու ամենահաստ ճիւղերի մէկից։

Ինքնասպանի ոտների տակ կարմիր քղամիդը երևում էր որպէս արեան մի մեծ լճակ։ Զաղալը անց կացրեց սրա մէջ ամբողջ գիշերը, իսկ արեգակի առաջին ճառագայթների հետ բաղէն սկսեց պտոյտներ գործել ծառի գլխով։

Մ. ք. Մելեանց

Բաթում.

ճանապարհին, հրապարակի վրա։ Արշամ Չիլինգարեանից վրէժ լուծելու համար այդ երկու մեղադրվողների մէջ կայացած համաձայնութեանը, անկասկած, նպաստում էին, սկզբնական քննութեան ցուցմունքով, նրանց մօտիկ յարաբերութեան ցուցմունքով, նրանց մօտիկ յարաբերութիւնները, որովհետև Սեպուհ Քիւրդեանի մայրը երեք տարի շարունակ ապրում էր Յովհաննէս Մեղաւորեանի մօտ, Թաթումում։ Պերճ Չիլինգարեանի սպանութեան օրը Սահակ Բագանեան և Բէջաբ Օսման-օղլի Օկուս-օղլի մեղադրվողները Մօղլա Յուսէյնի ամարանոցումն էին, ուր թղթախաղով էին զբաղված և, Թոմաս Բագանեանի խօսքով, դուրս եկան այնտեղից արևը մայր մտնելուց մէկ կամ մէկ ու կէս ժամ առաջ, այնպէս որ Բէջաբ իր քայլերն ուղղեց դէպի Չիլինգարեանի ամարանոցը, իսկ Սահակ Բագանեան, ներս վազելով տուն, շուտով կերաւ, հրացանը վերցրեց և գնաց դէպի երրորդ մեղադրվող Իբրահիմ Օսման-օղլուի տունը։ Այդպիսով վերոյիշեալ փաստերից երևում է, որ վերոյիշեալ երեք մեղադրվողների մէջ համաձայնութիւն կար իրանց յանցաւոր նպատակը իրագործելու համար։

Մեղադրական ճառը կարդալուց յետոյ, դատարանը մի քանի վկաների ներկայ չը գտնվելը արգելք չը համարելով գործի քննութեան համար, սկսեց ստուգել եկած վկաներին։ Վկաների մէջ կային ուղղափառներ, հայ-լուսաւորչականներ, հայ-կաթոլիկներ և մահմեդականներ։ Վկաներին երդուեցրին երեք քահանայ ու մէկ մոլլա։

Գլխաւոր մեղադրվող Սեպուհ Քիւրդեանը պաշտպան չունէր. Յովհաննէս Մեղաւորեանցին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Օպօչինին, իսկ մնացած երեք մեղադրվողներին՝ երդուեալ հաւատարմատարի օգնական Տէր-Մարտիրոսեանց։

Առաջին հարց ու փորձի ենթարկվեց Արշամ Չիլինգարեանց, սպանված Պերճի հայրը։ Չիլինգարեանը, սաստիկ յուզվելով, պատմեց այդ ողբերգութեան մանրամասնութիւնները և ասաց, որ այդ սիրագործութեան մէջ մեղաւոր է համարում Սեպուհ Քիւրդեանին։

Ապա մի ամբողջ շարք վկաների ցուցմունքներից աւելի և աւելի պարզվեցին այդ զարհուրելի յանցանքի մանրամասնութիւնները։ Մեծ տպաւորութիւն գործեցին վկայ Բէզանովի ցուցմունքները, որին, ինչպէս և Չիլինգարեանին, մի քանի անգամ հարց ու փորձի ենթարկեցին։

Տրապիզոնի ռուսաց հիւպատոս պ. Շչելկունովի տուած ցուցմունքը, որը կարդացվեց նրա բացակայութեան պատճառով, բացառապէս վերաբերվում էր Արշամ Չիլինգարեանցին, Յովհաննէս Մեղաւորեանցին ու Տրապիզոնի անկարգութիւններին, որոնք հայերի կոտորածի պատճառ դարձան։ Վկան նկարագրեց Յովհաննէս Մեղաւորեանցին իբրև ազնիւ վաճառականի, հեռու ամեն տեսակ յեղափոխական շարժումներից, այնպէս որ Շչելկունովի հերքում էր Տրապիզոնում հայ յեղափոխական մասնաժողովի գոյութիւնը։

Վկաների հարցափորձից յետոյ, նախագահը դատաստանական քննութիւնը վերջացած յայտարարեց և խօսքը առաջարկեց մեղադրութեան ներկայացուցչին—պրոկուրորի օգնական պ. Վօֆֆատօ-Պացիեվիչին։ Վիճաբանութիւնների միջոցին դահլիճը լիքն էր բազմութեամբ։

Մեղադրութեան ներկայացուցիչը, իր տաք ու տաղանդաւոր ճառի մէջ մանրամասն քննեց մեղադրական ակտի մէջ պարունակված փաստերը։

Պրոկուրորի օգնականը բոլոր մեղադրեալներին էլ մեղաւոր էր գտնում և պահանջում էր պատժել նրանց ամենախիստ կերպով։

Յովհաննէս Սեղաւորեանի պաշտպան Պ. Օպօչինին հերքեց Մեղաւորեանի որ և է մասնակցութիւնը այդ գործում, կանգ առնելով միայն այն բանի վրա, թէ այդ յանցագործութեան մէջ մեղաւոր է միայն Սեպուհ Քիւրդեան։ Պաշտպանի ճառը մեծ տպաւորութիւն թողեց։ Մնացած երեք մեղադրվողների պաշտպան պ. Տէր-Պետրոսեան նմանապէս ապացուցանում էր իր պաշտպանեալների անմեղութիւնը։

Դատարանը, մի փոքր խորհրդակցելուց յետոյ, յայտնեց իր վճիռը. Սեպուհ Քիւրդեանին զրկելով բոլոր իրաւունքներից և արտօնութիւններից՝ դատապարտել տաժանակիր աշխատանքներին ութ տարի ժամանակով, իսկ Մեղաւորեանին և մնացածներին արդար ճանաչել։

«Черн. Вѣст.»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զատկի տօների պատճառով, «Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնի շաբաթ, ապրիլի 24-ին։

—

Լսում ենք, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան նորընտիր վարչութիւնը և խմբագրական մասնաժողովը սկսել են մշակել հեղինակների վարձատրութեան և իրաւունքներին վերաբերեալ մի քանի խնդիրներ։ Մինչև այժմ հեղինակների վարձատրութիւնը որոշելու ժամանակ հաշուի չէին առնվում տպագրվող գրքերի օրինակների թիւը, չէր որոշված թէ քանի տարուց յետոյ հեղինակը կարող է իր գրքի երկրորդ տպագրութեան ձեռնարկել և նոյնմանման ուրիշ կէտեր մնացել էին առանց քննութեան և մշակութեան։ Այդ հարցերի քննութիւնը նպատակայարմար է և ժամանակակից։

—

Մենք յայտնել էինք, որ երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօր Մեդվեդեվի նախագահութեամբ մի յատուկ յանձնաժողով պատրաստում է Պարիզի ցուցահանդէսին ուղարկելու համար գիւղատնտեսական հաւաքածուներ։ Այդ գործին վերջնական կազմակերպութիւն տալու նպատակով այս օրերս Թիֆլիս պէտք է գայ Պետերբուրգից մի յատուկ պաշտօնեայ՝ Նիկոլաեվ։ Ապրիլի վերջին Ե. Մեդվեդեվի դիւանատունը տեղի կունենան այդ նպատակով մի քանի նիստեր մասնագէտների հետ։

—

Ապրիլի 15-ին, երեկոյեան ժամի 9-ին, պարսից Շահի որդի Շուաուզ-Սուլթանէ-Մանսուր-Միրզան ճանապարհ ընկաւ դէպի Բագու, որտեղից գնալու է Թէհրան։ Պրինցին ուղեկցում են Միրզա-Աբդուրրահման-խանը, Միրզա Ալակպար-խանը, բժիշկ Միրզա-Խալիլ-խանը, Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանը և ուրիշներ։ Պրինցը, ինչպէս լսում ենք, կիրակի պ. Վ. Ս. Թումանեանցի տանը։

—

Մեզ հաղորդում են, որ մասնագէտ Սատունին շուտով պէտք է ուղևորվի Հիւսիսային Կովկաս՝ ուսումնասիրելու այն կենդանիներին, որոնք վնասում են գիւղատնտեսական բոյսերին։ Սատունին Անդրկովկասում մի քանի տարուց ի վեր զբաղված է նոյն տեսակ հետազօտութիւններով։

—

Պետական խորհուրդը վերջին ժամանակներում բացատրել է, որ գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն, ներքին գործերի մինիստրութիւնը իրաւունք ունի թոյլ տալու դեղատներ բանալ ամեն տեղ, երբ նա՝ տեղի հանգամանքների պատճառով, անհրաժեշտ կը գտնի այդ։

—

Կոյբերին խնամող Կովկասի բաժնի խորհուրդը խնդրում է մեզ հաղորդել, որ անցեալ մարտի 20-ին, կոյբերի օգտին տուած ներկայացումից մուտք եղել է ընդամենը 1495 ր. 14 կ., որից հանելով ծախսը—628 ր. 85 կ., մնաց զուտ արդիւնք—966 ռուբլի 29 կոպէկ։ Խորհուրդը իր շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր անձանց, որոնք սիրով յանձն առան մասնակցելու երեկոյթին, նաև Թիֆլիսի բոլոր խմբագրութիւններին, որոնք ձրի տպեցին յայտարարութիւնը այդ երեկոյթի մասին։

—

Անդրկովկասի այն նաւթերի վերաբերութեամբ, որոնք ունեն նշանակութիւն մեծ վաճառանոցներում, վերջին տեղեկութիւնները հետևեալներն են։ Նաւթի գինը չէ բարձրանում, առաջվայ գնի վրա է։ Լոնդոնի վաճառանոցում Henry Schroeder and C° տեղեկութեան հիման վրա, ռուսաց կերոսինը ապրիլի $^{9}/_{21}$-ին ծախվել է $77^{3}/_{8}$ կոպէկով (մեր հաշով), իսկ ամերիկեան կերոսինը $90^{7}/_{8}$ կոպէկով։ Վօլգայի շրջանում գործերը թոյլ են։ Ցարիցինում կերոսինավաճառները փորձ փորձեցին գները բարձրացնել միայն 83 կոպէկի, բայց անաջողութեան հանդիպեցին. ոչ ոք չը համաձայնեց $82^{1}/_{2}$ կոպէկից աւելի տալ. օրական հինգ վագոնից աւելի կերոսին չէ պահանջվում։ Վաճառականները յոյս ունեն, որ կերոսինի գները կը բարձրանան, այդ պատճառով երկար ժամանակով էժան կերոսին ծախող չը կայ։ Նաւթային մնացորդների գները, որ լաւ էին, կանգ են առել այժմ. գնողները յոյս ունեն, որ ապրանք շատ պէտք է դայ Բագուից և նա պէտք է էժանանայ։ Նաւթային իւղերն էլ քիչ են պահանջվում։ Նաւթային արդիւնքների վերաբերութեամբ առհասարակ նկատվում է սպառնական դրութիւն։ Շերամը և մետաքսը առաջվայ պէս լաւ գին ունեն։ Մարսէյլում և Լիոնում մեծ պահանջ կայ ապրանքի։ Լիոնի գործարանատէրերի նիւթի պակասութեան պատճառով անկարող եղան պատուէրներ վերցնել։ Մետաքսեղէնի գնի բարձրանալը, սակայն, մի երկիւղալի կողմ ունի, որ կարող է նրա պահանջը հէնց այդ թանգանալու պատճառով պակասել։ Մօսկվայում Կովկասի թելերը ծախվել են ապրիլի 4-ին հետևեալ կերպով. ուտօկ $^{28}/_{30}$ դենիենոց 270—280 ռուբլիով, $^{30}/_{32}$-ը 260—270 ռուբլի, $^{34}/_{36}$-ը 250—260 ռուբլի, $^{36}/_{40}$-ը 240—250 ռուբլի, կովկասեան օսնօվան $^{28}/_{30}$ դենիենոց 315—325 ռուբլի, գրեժը $^{13}/_{15}$-անոց 210—240 ռուբլի. բամբակը, Զատկի տօների պատճառով, քիչ է պահանջվում։ Մօսկվայում միջին-ասիական բամբակը ամերիկական սերմից ապրիլի 4-ին ծախվել է 2 ր. 15—25 կոպէկ պուդը, երկրորդ տեսակինը 8 ր. 40—50 կոպէկ, Բուխարայինը 7 ր. 70—75 կոպէկ։ Պարսկական բամբակ քիչ է պահանջվում. Խորասանի բամբակը հաղիւ է կարողանում ծախվել 6 ր. 40 կոպէկով։ Իսկ Մազանդարանինը՝ բոլորովին չէ պահանջվում։ Բուրգը դեռ լաւ գների է սպասում. պահանջ չը կայ ոչ Լօձից, ոչ Բելօստոկից։ Միջին-Ասիայի բուրդն Մօսկվայում տալիս են, նայած որակութեան 4 ռուբլի 25 կոպէկից մինչև 5 ռուբլի։ Մանուֆակտուրի ապրանքի վերաբերութեամբ առհասարակ նկատվում է թուլութիւն. թէ Մօսկվայում և թէ Լօձում ապրանք չէ ծախվում. սպասում են, որ մայիսից գործերը կենդանութիւն ստանան։ Բրդի մանածը կորցրել է գինը. իսկ բամբակինը՝ լաւ է ծախվում. ծխախոտի վերաբերութեամբ տեղեկութիւններ քիչ են։ Մայկօպի կալուածներից մէկը ծախել է 1000 պուդ ծխախոտ (1897 թուի հաւաքած) 6 ր. 50 կ. պուդը, վեց ամսից յետոյ ստանալու պայմանով։ Շաբաթի գինը Բօստօվում ընկել է, բայց Կիևում, որ նշանաւոր կենտրոն է, փոքր ինչ սկսել է բարձրանալ։ Արտասահմանում շաքարը թանգանում է այն պատճառով, որ Կուբա կղզում շաքարի եղէգնը լաւ հունձ չէ տուել. Գերմանիայում էլ պակասում է ճակնդեղի ցանքը։ Սպիրտը Բօստօվում թանգացել է 10 կոպէկով. մի վեդրօն, 40%-անոց առանց ակցիզի, ծախվել է 80—90, իսկ մաքրածը 1 ր. 10—20 կոպէկ։ Հացահատիկների գինը տատանման մէջ է. յամենայն դէպս այլ ևս չէ իջնում և փոքր ինչ բարձրացել էր ցանքսերի մասին ստացած վատ լուրերի պատճառով։

—

Երկարատև չոր եղանակներից յետոյ Թիֆլիսում ահա հինգ օր է, որ գալիս է անձրև։ Ինչպէս հաղորդում են մեզ, անձրևներ գալիս են մեծ տարածութեան վրա հարևան գաւառներում։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են հետևեալը. «Ապրիլի 2-ին Պետերբուրգում կայացաւ երգեցողութեան պրօֆէսօր Վիգեման-Արնօլդի աշակերտների կօնցէրտը, որին մասնակցեց նաև մեր հայրենակից տիկին Իւլիա Սպենդիարեան (Ռաֆայէլ Պատկանեանի քրոջ աղջիկը)։ Վերջինի ձայնի և երաժշտական ընդունակութիւնների մասին մեծ գովասանքով խօսեցին մայրաքաղաքի ռուս և գերմանական «Petersburger Zeitung» լրագիրները։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՑԱՍՏԱՆԻՑ

(Կ. Պօլսի լրագիրներից)

—

—Վանէն հասած արժանահաւատ տեղեկութիւններէ կիմացուի, որ Հռովմէականութեան յարող ազգայինները մեծ մասամբ զղջման գրով մը վերադարձած են իրենց մայրենի եկեղեցին, և անոնց Օսմանիէ թէզքէրէներուն փոփոխման գործողութիւնը քիչ ատենէն կը լրանայ։

—Վանէն հասած տեղեկութիւնները կը յաւելուն թէ դաւանափոխութեան մասին եղած հրատարակութիւնները չափազանցուած են և թէ Վանայ ժողովուրդը հայրենի սրբութենց պահպանութեանը միշտ նախանձախնդիր կը մնայ։

—Այսօրուան թուրք թերթերը՝ երէկուան «Թարիգէն» առնելով՝ կը հրատարակեն Վանայ կարօտեալներուն նկատմամբ կայսերական կառավարութեան ըրած մէկ նոր շնորհը, զոր գոհութեամբ կարձանագրենք։ Ինչպէս կը յիշուի, Վանայ չքաւոր երկրագործներուն սերմնացու տրուելու համար Երկրագործական Դրամատան տեղւոյն մասնաճիւղէն 200,000 ղրշ. յատկացուած էր։ Այս անգամ ալ, Տիարպէքիրի, Խարբերդի և Պիթլիսի կուսակալութեանց մնացուկներէն 200,000-ական ղրշ. յատկացուած ըլլալով, ներքին գործոց նախարարութիւնը հեռագրած է յիշեալ նահանգներու կուսակալներուն որպէս զի այդ գումարները անմիջապէս Վան ղրկեն։ Ասկէ զատ, Բարձր. Մեծ-Եպարքոսը գրած է եղեմական նախարարութեան որպէս զի առաջին առթիւ սոյն գումարները Վան ղրկելու համար հրահանգ տրուի Տիարպէքիրի, Խարբերդի և Պիթլիսի տէֆթէրտարներուն։ Սոյն երեք նահանգներէն ղրկուելիք 600,000 ղրուշի գումարը՝ Վանայ կուսակալութեան 200,000 ղրուշին վրայ բարդուելով, պիտի յատկացուի սերմնացու առնելու, և ինչպէս ժամանակին ծանուցած ենք արդէն, Վանայ կուսակալ Թահիր փաշայի նախագահութեան տակ կազմուած Ցանձնաժողովի մը միջոցաւ պիտի բաշխուի ամէնէն աւելի կարօտ և չքաւոր երկրագործներուն։

—Զէյթունէն Պատրիարքարան հասած գրութիւն մը տեղւոյն վանքին մէջ պատահած հրդեհը կը նկարագէ հետևեալ կերպով։ «Մարտի 10-ի չորեքշաբթի իրիկունը, գոյժ մը լսուեցաւ քաղաքիս մէջ թէ հրդեհ կայ, վանքը կայրի. ամէն մարդ արկածի վայրը փութաց և տեսնուեցաւ որ վանքին մէկ կողմը ամբողջ բռնկած է։ Գայմագամ պէյը, հաղարապետը և ուրիշ պաշտօնական անձեր հրդեհին վայրը դիմեցին, իրենց հետ ունենալով զօրանոցի ջրհանը և ամեն ջանք ի գործ դրին հրդեհը մարելու համար ու յաջողեցան ծաւալումը արգիլել։ Հրոյ ճարակ եղան միայն վանքին խոհանոցը՝ մաս մը պղնձեղէններով, սեղանատունը և ասոնց միջև գտնուած սենեակը։

—Դարձեալ Զէյթունէն հասած նամակէ մը կիմանանք թէ, գայմագամ պէյը տեղեկանալով որ ազգ. վարժարանին մէջ աշխարհագրական քարտէսներու պէտք կայ, իր կողմէ 25 կտոր թրքատար քարտէս բերել տալով Պօլսէն, գեղեցիկ շրջանակներով և ժապաւէններով զարդարելով՝ անձամբ վարժարան տարեր և այս առթիւ աշակերտներուն ուսումնական կարողութիւնը քննելով, մանաւանդ թուրքերէնի և աշխարհագրութեան մէջ, նուիրեր է քարտէսները։ Գայմագամ պէյը աշակերտները խրախուսելով գոհունակութիւն յայտներ է անոնց աշխատասիրութեանը համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Արևելք» լրագրի մէջ կարդում ենք. «Ժամանակին ծանուցինք, թէ Գուլկարիոյ հայ գաղթականութիւնը արծաթեայ փառաւոր պսակ մը պատրաստած է՝ Մառի Լուիզ իշխանուհիին դաղաղին նուիրելու համար։ Այս պսակին նուիրման վրա հետևեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ «Ստամպուլ» Ֆիլիպէէն «Քուռիէ տէ Պալքան» լրագրին ուղղուած նամակէ մը քաղելով. «Կը յիշէք անշուշտ, թէ Գուլկարիոյ զանազան քաղաքներուն հայ հասարակութիւնները՝ յոյժ սիրեցեալ Մառի Լուիզ իշխանուհիին մահուան յաջորդ օրը՝ արծաթեայ պսակ մը յանձնարարած էին ի Վիէննա, իշխանուհիին դագաղին նուիրուած ծաղկեայ պսակին տեղ դրուելու համար։ Այս պսակը հասած ըլլալով, Ն. Բ. Իշխանը, որ իմացած էր, փափաք յայտնեց զայն տեսնելու։ Ուստի այս առթիւ հաճեցաւ ընդունել այն անձերը, զորս հայ հասարակութիւնը պատուիրակ կարգած էր իշխանուհւոյն յուղարկաւորութեան և որոնք պաշտօն ունէին նաև արծաթեայ պսակը դնել գերեզմանին վրա։ Այս պսակը ձոյլ արծաթէ է, ոսկեխառն զարդերով և Մառի Լուիզ իշխանուհիին զինանշանները կը կրէ։ Պատգամաւորութիւնը, զոր կը կազմէին երեք հայ վաճառականներ—տարք Շիրինեան, Թամիրեանց, և Քիւրտեան—պատիւ ունեցաւ իշխանին ներկայանալու երկուշաբթի առաւօտ և կարդաց նամակ մը, որով Գուլկարիոյ հայ հասարակութեան խորին ու անկեղծ վիշտը կարտայայտէր այն մեծ ու անակնկալ սուգին համար, որ պատեցով իշխանը, համայն երկիրը պատեց։ Նորին Բարձրութիւնը, որ յոյժ սիրալիր ընդունելութիւն մը ըրած էր պատգամաւորութեան, պատասխանեց զգածեալ խօսքերով և իր գոհունակութիւնը յայտնեց ի տես այս նոր մեծարանքին, որ կընծայուի վաղամեռ իշխանուհւոյն յիշատակին։ Իշխանը վերջացուց իր խօսքերը, յանձնարարելով պատգամաւորութեան՝ իր ողջոյններն ու շնորհակալութիւնը հաղորդել հայ հասարակութեան զոր կը ներկայացնէր։ Ընդունելութիւնը տևած էր 20 վայրկեան»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԶԱՏԿԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

—

Զատիկ է։ Եթէ մէկը մոռացած լինէր օրացոյցը, բաւական է, որ նա մի անգամ անցնէր Թիֆլիսի մագազինների մօտով։ Այդտեղ նա կը տեսնէր զատկական ամեն տեսակ զարդարանքներ, ձուեր, պասքաներ։ Ամբոխի շարժման հետ ես ևս մտայ շատ մագազիններ և սկսեցի ծանօթանալ մարդկանց զուարճութեան համար հնարված այդ առարկաների հետ։ Ինձ առանձնապէս հետաքրքրեցին «սիրպրիզներով» ձուերը։ Փայտից, թաւշից, կերպասից, մետալից շինած և հիւսած զանազան մեծութեան և գոյնի ձուերի մէջ դրված էին ամեն տեսակ իրեր, որոնք և կազմում են հետաքրքրութեան առարկան—զատկական նուէրներ։ Ես ձեռք բերի զանազան տեղերից սիրպրիզով ձուերի մի ամբողջ արկղ և ահա այսօրվայ պօստով

ուղարկում եմ մի քանի անձերին և հիմնարկութիւններին, իբրև առանձին ուշադրութեան մի նշան։

Ահա այն նուէրները, որոնք ուղարկվեցին ձուերի հետ։

Հարուստներին—խցաններ և բաժակ՝ ականջները աւելի ամուր և ապահով փակելու համար։

Երիտասարդներին Բագում և ուրիշ տեղերում—ուսանող ժամանակի լուսանկար և մի պատճէն այն երդումների, որ տրվեցին ուսանող ժամանակ հաւատարիմ մնալու յաւիտենական գաղափարներին։

Վանի կրօնափոխներին—Մաշտոց և նրա կողքին տասն ոսկի։

Թիֆլիսի կրեդիտային ընկերութեան—խմբագիրների ցուցակ պաշտօններ բաժանելու համար։

Դատարկ դրամարկղին—Անժուսնալուծութեան խնդիրքներ ոսկէ շրջանակների մէջ։

Հրատարակչական ընկերութեան—գրքերի ամբողջ պահեստը 20,000 ռուբլով գնելու առաջարկութիւն։

Բագուի դեղագործներին—չիշերքանի մի կաթիլ հասարակ ջրով—ծարաւ բագուցիներին դեղի փոխարէն ծախելու համար։

Ալէքսանդրօպոլի քաղաքային վարչութեան—գիմնազիայի ծրագիր՝ հաստատված և ստորագրված։

Ներսիսեան դպրոցին—մի կտակ դպրոցի շինութեան համար։

Տարազի հրապարակախօսներին—մի ման աղ։

Պերճ Պռոշեանին—երեք հարիւր հեռագիր և համապատասխան ծրարներ։

«Մուրճի» խմբագրին—մի հասարակ ճիշդ հայելի, որպէս զի դէն շպրտվի խմբագրատան մէջ եղած խոշորացնող հայելին։

Գ. Զալիսուշեանին—նշտար և ածելի Ֆեմիդայի կնիքով։

Մեր յայտնի ծոյլերին—մի մի մի ժամացոյց ժամանակը գնահատելու համար։

Վաշխառուներին—ձախ ձեռքի համար մի տպրուկ, իսկ աջ ձեռքի համար վաշխառութեան դէմ վերջին օրէնքը։ Մի ձեռքը չը պէտք է գիտենայ միւս ձեռքի արածը։

Քաղցած գիւղացիներին—մեր ինտելիգենցիայի կուշտ ճառերը՝ տպված պապիրոսի թղթի վրա։

Տեղական ռուս թերթերին—մրկբատներ զանազան մեծութեան և ձևի՝ պատրաստ նիւթերը կտրելու և արտատպելու համար։

Մուրճի աշխատակիցներին—մի մի մուրճ «Մուրճի» համար։

Ներսիսեան դպրոցի ուսուցիչներին—թոշակարկղի առաջին անդորրագիրը։

Հաագայի կոնֆերենցիայի անդամներին—իսկական աւետարան, և ոչ թէ այն տեսակը, որի մասին խօսեց պրուսական իշխան Հէյնրիխ։

Հոգևորականներին—ականջփորիկներ՝ սուրբ գրքի պատուիրանների համար տեղ բանալու։

Փոքր-Ասիայի որբանոցներին—Պատրիարքարանի հոգեչահ ճառերի մի օրինակ՝ մարմինը տկարացնելու և հոգին ուժեղացնելու համար։

Օրմանեանին—փուքսեր թող փչելու համար, թռուցիկ օձեր՝ վախեցնելու համար և փամփուշտներ՝ ծիծաղեցնելու համար։

Թիֆլիսի ձայնաւորներին—համերաշխ կոնցերտի նոտաներ։

Իրանցանուանարկելցանկացողներին—դիֆֆամացիայի մեղադրանքի խնդիրք տալու ձևը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

15 ապրիլի

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Մակ-Կինլէյ երէկ ընդունեց գերմանական դեսպան Գոլլէբենին, պախարակեց Կոդլանին նրա վարմունքի համար՝ և խնդրեց դեսպանին հաւատացնել գերմանական կայսրին և գերմանական պետութեան նրա բարեկամական զգացմունքների մասին։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Դանիայի «խաղաղութեան դաշնակցութիւնը» թագաւորին մի ուղերձ մատուցեց 286,000 ստորագրութեամբ, որի մէջ խնդրում է թագաւորին յանձնարարել կոնֆէրէնցիայի դանիական պատգամաւորներին, որպէս զի նրանք աշխատեն ընդունել տալ Դանիայի մշտական չէզոքութիւնը, ուրիշ երկիրների հետ միջնորդ դատարանին վերաբերեալ դաշնագիրները և չափազանց սպառազինութեան սահմանափակումը։ Խորհրդի նախագահը այսօր այդ ուղերձին դրական պատասխան տուեց, դուրս ձգելով միայն Դանիայի չէզոքութեան խնդիրը, որը չէ կարելի յանձնել Հաագայի կոնֆէրէնցիայի քննութեան։

ԼՕՆԴՕՆ։ Գօշէն, ինժեներ-մեխանիկների ինստիտուտում տեղի ունեցած բանկետում, մի ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց, թէ այժմ քաղաքական աշխարհի հորիզոնից անհետացան բոլոր սպառնալի ամպերը։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ասեց մինիստրը, ես կարծում եմ, որ նրա հետ մենք ապողեցրինք բարեկամական համաձայնութիւն հաստատել։ Գերմանիայի հետ արդէն բարեկամական յարաբերութիւն հաստատված է։ Ֆրանսիայի հետ, չը վիրաւորելով ոչ նրա և ոչ մեր ազգային զգացմունքները, մենք հասանք համաձայնութեան, մի շատ դժուար և փափուկ հարցի առիթով։

16 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 15-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա Օգոստափառ Որդկերանցով և Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ ընդունեցին ս. Հաղորդութիւն, Ձմերային պալատի փոքր եկեղեցում։ Սուրբ պատարագի միջոցին ժամանեց Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան Օգոստափառ Որդկերանցով, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ։

ԽԱԲԱՐՈՎՍԿ։ Զինաց այրի թագուհին նշանակել է զօրախաղ հիւսիսային Զինաստանում։ Զօրախաղին կը մասնակցէ 200,000 զօրք։ Զօրախաղը տեղի կունենայ յունիս ամսին, Պեկինում, որսորդական պարկ կոչված տեղում։

ԼՕՆԴՕՆ։ Ապիից հաղորդում են, որ Մատաֆէյի կողմնակիցների և Տաաֆուի մէջ պատերազմ է տեղի ունեցել, որի ժամանակ սպանված են և վիրաւորված 20 մարդ, որոնց մէջ չը կայ ոչ մի եւրոպացի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վենեբական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(ե. հ. չ.) 25—100

(չ.) 6—52

Լույս տեսաւ
ՓԱՐՐԱՐԻ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԸ
ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.
Դիմել՝ Тифлисъ, Авчальская, д. № 13, священнику Габріэлу Теръ-Габріэлянцъ.
(չ) 2—6

(տես. 20) 9—11

Վաճառվում է ապրանք. և պարֆիւմ. խանութներում։

Դրամագիտուղում ի. Դրատեա Ֆ. Բրոկարդ։

(9 և 19) 4—12

Թիֆլիսաբնակ մի պարոն, որը ժողոված ունի «Մշակ» լրագրի անցեալ տարվայ համարները, ցանկանում է ծախել, որից գոյացած փողը ժառդիր է բաժանել աղքատներին։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։
(և. չ.) 2—2

ՁԵՐ ՍԽԱԼՈՒԹԻՆՔԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՖԻՐՄԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1891 ԹՎԻՑ

Ա. Գ. Տէր-Յովհաննէսեանցի

ԽԱՆՈՒԹՈՒՄ,

որը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Դվորցովայա նօմերների մուտքի կողքին,

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ

Վաճառվում են էժան գներով ամենաընտիր տեսակների

ՄԱՀՈՒԴԵՂԷՆՆԵՐ

Ստացված ՖՐԱՆՍԻԱՑԻ և ԱՆԳԼԻԱՑԻ յայտնի գործարաններից։

Պատուէրները կատարվում են, ինչպէս և առաջ, հմուտ ձեւիչի հսկողութեամբ։

Գների էժանութեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնողները կարող են համոզվել անձամբ, յաճախելով մեր խանութը։

(և. չ.) 3—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 14/26 ապրիլի, ՍԻՐԿԱՍԻ չոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԿ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Թօջափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին Կօլուբիակինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենրոզերին։

(և. հ. չ.) 4—20

ԷԺԱՆ, ԼԱՒ ԵՒ ԺԱԾԱԿՈՎ

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլով. պրոսպէկտ, I-ին գիմնազիայի հանդէպ։

Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխաների զարնանային և ամառվայ պատրաստի հագուստներ։ Գների էժանութեան և ապրանքի լաւութեան մասին. պ. պ. գնողները կարող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը։

9—10



3—10

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Апрѣля 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.